ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի 4-րդ կետի տեղեկացնում եմ, որ ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

Կից ներկայացնում ենք խորհրդի որոշման քաղվածքը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության
խորհրդի նախագահ՝ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

09.07.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
Մուտքի թիվ 10734-19
09. 07. 19.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի հուլիսի 9-ի նիստի թիվ 8 արձանագրությունից.

Օրակարգում. 1. ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի սեպտեմբերի 2-ին, ժամը 14^{00}- ին:
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Փոքրաշենի միջնակարգ դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 24.07.2019թ.– 22.08.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 19.07.2019թ.-ին, երկրորդը՝ 27.07.2019թ.-ին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի նախագահ Է. Բաղդասարյանի վրա:

ՀՀ Շիրակի մարզի «Փոքրաշենի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ Է. Բաղդասարյան

09.07.2019թ.